

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ

5199 ՏԱՐԻ, ԹԻՒ 11

(ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ)

16 ՄԱՐՏ 1902

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՊԱՂՏԱՏԻ ԵՐԿԱԹՈՒՂԻՆ	Մ. ՆԱԹԱՆԵԱՆ
ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆՆԵՐ	Տ. Ա.
ԳՐԱԿԱՆ ԺՕՄԱՆՅ (Արտատպում)	ԳՐ. ՄԱԼԽԱՍ
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ	
Ձմրան ֆերբուածը	Վ. ՄԱԼԷՋԵԱՆ
Խոնջեմ	ՎԱՐԴԳԵՍ
ԿՆՈՋ ԲԱԺԻՆԸ	Յ. ՏԷՐ-ՅԱԿՈԲԵԱՆ
ՃԵՐՄԱԿ ՀՈՎԱՀԱՐՈՎ ՏԻԿԻՆԸ (Զինական նորավեպ)	ԱՆԱԹՕԼ ՅՐԱՆՍ

«ԳՈՂՅՈՒԹ ՄԱՍԱՆԻՒՆ» ՇՈՒԴՂ. — Նամակ Յովն. Նախկ. Արարունքի
 և պատասխան «Մասիս»-ի խմբագրութեան:

ՇԵՐԵՐԸ (Քերբուած) ՏԻԿԻՆ ԷՏՄՕՆ ՌՕՍԹԱՆ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ ԻՐ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ (Թարգմ. Անգլիերեհէն)
 ՅՈՒՇԱՏԵՏԻ

Մասիս շաբաթաբերքի տարեկան բաժանորդագիրն է Կ. Պոլսոյ համար ՔԱՌՍՈՒՆ զրո. և գաւառներուն համար ՅԻՍՈՒՆ զրո., կանխիկ վճարելի: Արտատպում 12 Ֆրանկ կամ 5 րուպլի: Թղթատարական ծախքը խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ կամ եռամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն ամսոյ մէկէն: Մասիս հրատարակ կ'ելլէ ամէն շաբաթ առտու, և կը գտնուի Բերայի բոլոր ծխախոտանոցներուն ու Պանչէ-Գաբուի ջրավաճառներուն խանութները, ինչպէս նաեւ Ղալա. քիոյ, Պոլսոյ և բոլոր արուարձաններու լրագրավաճառներուն ֆոյ:

Ձեռքէ կը ծախուի ՀԱՏԸ 40 ՓԱՐԱՅԻ

ՀԱՍՏԷ

در علیہ غلطہ «ماسیس» غرضی ادارہ

և ՄԱՌԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԱՍԻՍ»-Ի

Կ. Պոլիս, Ղալաքիս, արտատպութեան խան

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

Ա Ր Ի Ս Ե Ը

ՇՈՒԿԵՇԱՐԺ ԳՈՐԾԱՏՈՒՆ

ՀՈՏԵՂԻՆԱՑ ԵՒ ՕՃԱՌԻ

Հիմնեալ 1889 ին

Կ. ՊՈԼԻՍ

ԹԱՀՏԱՔԱԼԷ



Վաճառք



Արուեստագիտական վերջին կատարելագործութեամբ եւ առաջնակարգ մեքենաներով օժտեալ եւ եւրոպացի վարպետի մը հսկողութեան ներքեւ կ'արտադրէ ամենաուրբ հոտեղէններ ինչպէս նաեւ թուալէթի հոտաւէտ եւ լուացքի պարզ օճառներ :

Տեսակի աղնութեան մասին եւրոպական ամենամեծ գործարաններու ապրանայ գէժ մրցելու առաւելութեան կը միացնէ գիններու գերազանց աժանութիւնը փախաքողներուն՝ քաթալօյը ձրի կը զրկուի :

Մեծաքանակ գնում ընել ուզողները կրնան դիմել Կ. Պոլսոյ մէջ ՕՐՕՍՏԻ ՊԱՔԵՒ Կ. ԻՆՃԻՃԻՆԱՆ ՈՐԴԻՔ Վաճառատունները , իսկ գաւառներու եւ օտար երկիրներու մէջ դիմել գործակալութեանց որ ի ստորեւ , ուր պիտի գտնեն նմոյշներու ցուցադրութիւն մը՝ պէտք եղած բոլոր տեղեկութիւններով :

ԲԱՐԻՋ. — Պ. Լաքառիեռ Որդի եւ Ընկ. 28 Ռիւ

Շաքոտեօն :

ՊՈՄՊԱՑ. — Պ. Ապքար եւ Ընկ.

ԱՂԵՔԱՆՆԻՐԻԱ. — Պ. Մ. Գալֆանան

ԳԱՀԻՐԷ. — Պ. Հ. Ռոզանքալ :

ՌՈՒՍՃՈՒԿ. — Պ. Պ. Կ. Ինճիճեան որդիք :

ՎԱՌՆԱ. — Պ. Կեռոն Արտիքի :

ԻՋՄԻՏ. — Պ. Յակոբ Մոմճեան

ՋՄԻՌՆԻԱ. — Պ. Հայնրիխ Վառնիկ

ՍԵԼԱՆԻԿ. — Պ. Տիեօ Ֆերանտեզ :

ԻՍԿԻԻՊ. — Պ. Մ. Գալֆանան :

ՊԵՐՈՒԹ. — Պ. Ֆրանքել Շիֆֆեր

ՍԱՄՍՈՆ. — Պ. Պ. Պետրոսեան Եղրաք

ՏՐԱՊԻՋՈՆ. — Պ. Աբիս Կ. Ինճիճեան :

ՍԵՐԱՍՏԻԱ. — Պ. Պ. Վ. Ս. Մեծատուրեան

ՌՈՏՈՐԹՕ. — Պ. Յակոբ Բոսփաւալ



ՌՕՍԻԱ — ROSSIA



Ա. ՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ

1898 տարւոյ մէջ գանձուած ապահովագրիւններ

34,775,642 ֆրանք

Երաշխաւորութեան գումար

121,765,333 »

1881էն ի վեր ապահովագրեալներուն վճարուած

164,172,000 »

Կեդրոնացեալի, Ղալաթիոյ Բաթափին վրայ, Մաքսաւան հին տեղը

Ընդհ. Գնահիշ

Ընդհ. Գործակալ

Ա. ՀԻՒՐՄԻԻՋ

ԹԷՈՏՈՐ ՌԷԲԷՆ

ՄԱՍԻՆ

51^{րդ} ՏԱՐԻ

— 16 ՄԱՐՏ 1902 —

ԹԻՒ 11

ՊԱՂՏԱՏԻ ԵՐԿԱԹՈՒՂԻՆ

Երկրագնդիս զանազան մասերուն մէջ կան արգարեւ երկաթեայ աւելի մեծ ու աւելի երկար զիծեր քան Պաղտատի երկաթուղին որուն շինութեան կայս. իրատէն ելած է արդէն : Բայց անոնցմէ ոչ մէկը ունի համաշխարհային հաղորդակցութեանց զերուութեան տեսակէտով այն անզուգական կարեւորութիւնը զոր ունենալ սահմանուած է Ասիական Թուրքիոյ մէկ ծայրէն միւսը երկնալիք այս երկաթեայ ճամբան : Զի Արեւելքը ու Արեւմուտքը իրարու մօտեցնող ամենէն կարճ ու բեղմնաւոր պողոտան պիտի կազմէ ան, քանի որ օր պիտի գայ որ Հայտար Փաշայէն մինչեւ Պատրա կարելի պիտի ըլլայ երթալ միայն 40 ժամէն, մինչ սկզբնաւորութեան առաջին օրերն իսկ 55 ժամէն աւելի երկար պիտի տեւէ այդ ուղեւորութիւնը : Թէ ի՞նչ մեծ զերուութիւն է որ կը արուի այդպէսով Արեւելեան եւ Արեւմտեան փոխադարձ վաճառականութեան ու հաղորդակցութեան, հարկ չէ բացատրել, քանի որ զրեթէ բոլոր ազգերն առհասարակ պիտի օգտուին անկէ : Բայց երկաթի այդ զիծին գլխաւոր օգուտը եւ առաւելութիւնը ամենէն աւելի բուն իսկ Օսմանեան Կայսերական Պետութեան երկիրն է որ պիտի վայելէ : Եւ այդ վայելքը խիստ բազմակողմանի է. ոչ միայն պիտի ծառայէ Ասիական Թուրքիոյ այնքան հեռաւոր նահանգները իրենց լայնատարած սահմաններով բանալ ներքին ու արտաքին վաճառականութեան առջեւ, զարգացնել այն կողմերու բնական արգասաւորութիւնը եւ տնտեսական բարգաւաճումը, այլ եւ հաղորդակցութեանց

զերուութեան եւ արագութեան միջոցով՝ քաղաքակրթութեան բարիքները Վեհ. Սուլթանին բարձր հովանիին ներքեւ աւելի եւս տարածել ամենէն հեռաւոր անկիւնները քիչ ժամանակէն :

Իսկ եթէ անգամ մը միտք բերուի թէ ի՞նչ որքա՞ն բեղմնաւոր երկիրներ են բոլոր այն տեղերը ուսկից վայրաշարժին սուրիչը պիտի անցնի քիչ ատենէն՝ դարաւոր կոյս անտառներու եւ սննդանաւալ դաշտերու հանդարտ ու լռին խաղաղութեան մէջէն, այն ատեն միայն պիտի չափուի ու գնահատուի հրաշագործ ազդեցութիւնը Պաղտատի այս մեծ երկաթուղին որ 2500—3000 քիլոմէթր երկարութեան վրայ պիտի տարածուի Արեւմուտքէն դէպ Արեւելք՝ հակելով հեազհետէ միշտ դէպ ի հարաւ : Զի յիշել բաւական է թէ անոր անցնելիք ճամբաներուն մեծագոյն մասը այն երկիրներուն մէջէն է որ Սուրիոյ, Միջագետք, Ասորեստան ու Բաբելոնստան նախկին անուաններով ծանօթ աշխարհներ էին ի հնումն, որոնք խանձարուր ու կեղրոն եղած են քաղղէական քաղաքակրթութեան :

Պաղտատի երկաթուղին՝ հնախօսական տեսակէտէն զատ՝ աւելի մեծ արժանիք ու նշանակութիւն ունի տնտեսական այն իրական օգուտին ու զարգացման տեսակէտով որ պիտի ծագի անմիջապէս երկաթուղիին շահագործութենէն, քանի որ երկրին մէկ ծայրէն միւսը պիտի երկարի ան՝ կապելով մայրաքաղաքը իր ամենէն հեռաւոր նահանգին եւ Վոսիորը՝ Պարսկային ծոցին

հետ, եւ քանի որ այս նոր գիծը անմիջական յարաբերութեան մէջ պիտի գնէ Գոնեայի, Ատանայի, Հալէպի, Մոսուլի, Պաղատի եւ Պատրայի նահանգները, որոնց ընդարձակութեանը վրայ զաղափար մը տալու համար աւելորդ չհամարուի յիշել թէ, ինչպէս Սալպահ լրագիրը հրատարակեց քանի մը շաբաթ առաջ, միայն Պաղատի կուսակալութեան տարածութիւնն է 170,000 քառ. քիլոմէթր, եւ Պատրայինը՝ 150,000: Այլ որպէսզի ազէկ հասկցուի թէ ինչ մեծ տարածութիւններ են ատոնք, աւելորդ չենք համարիր հետեւեալ բաղդատական թիւերն ալ շարել այստեղ անոնց դէմ:

	Գո. Գիլ.
Ռուսմահա	431,000
Փորթուկալ	91,000
Յունաստան	65,000
Սերպիա	48,000
Զուլցերիա	41,000
Տանիմարբա	38,000
Հոլանտա	33,000
Պելճիքա	30,000

Եւրոպական այս փոքր տէրութեանց իւրաքանչիւրէն մեծ ու ընդարձակ են նաեւ երկաթուղիին կարելիք անցնելիք միւս կուսակալութիւններն ալ, որոնք հետեւաբար աւելի՛ չենալու դեռ շատ յարմարութիւն ու ընդունակութիւն ունին: Այլ անոնք չեն որ միայն պիտի օգտուին ու զարգանան՝ որոնց մէջէն պիտի անցնի երկաթուղին, այլ եւ անոնց սահմանակից կուսակալութիւններն ալ, ինչպէս՝ Խարբերդ, Տիարպէքիւր եւ Վան, զի ատոնց ալ զանազան դաւառները կից են մեծ գիծին երկայնքը տարածուող նահանգներուն, սւտի ընակահարար պիտի կրնան օգտուիլ ներածման եւ արտածման, ինչպէս եւ, ուղեւորական տեսակէտներով, օրինակի համար, Վանէն լեռնային ճամբով 10 օրէն կրնայ երթալ Մոսուլ: Եւ անկէ՝ չորեկառք նստելով Կ. Պօլիս՝ զալ կամ ալլաւր երթալ: Իսկ Տիարպէքիւր աւելի մեծ զիւրութիւններ պիտի վայելէ, զի աւելի մօտ է Մոսուլի:

Եւ յետոյ, երբ մտքի առջեւ բերենք թէ բաց ի այն ծանօթ քաղաքներէն որ կ'իյնան Հայտար Փաշայէն մինչեւ Գոնեա արդէն չին-

ուած եւ այժմ քանուկ գծին վրայ, նոր գիծը պիտի տեսնայ ու ողջունէ նաեւ հետեւեալ կարեւոր քաղաքները ու աւանները, այն ատեն պէտք եղած զաղափարը կ'ունենանք անոր ընծայելիք կենսական օգուտն. բուն վրայ, Ահա անոնց անունները՝ սիսելով Գոնեայէն, Գարաման, Էրէյլի, Ատանա (որ արդէն երկաթուղիով կապուած է Մէրսինի), Համիտիյէ, Քիլիս, Թէլպէշար (ուսկից դիմալ պիտի երկարի դէպ ի Հալէպ), Պիլէ-ճիք, Խառան, Բէս-իւ-Այն, Նիզիպին (մասնադիմալ մը պիտի երթայ մինչեւ Ուրֆա), Մոսուլ, Թէքրիդ, Սաաթիյէ, Խանէքին, Պաղատ, Քէրպէլա, Նէճէֆ, Զօպէյր եւ Պատրա:

Աւելորդ է ըսել թէ բուն իսկ գծին վրայ իյնող այս քաղաքներէն զատ երկաթուղիին շնորհիւ պիտի օգտուին անոնց մերձակայ աւելի բաղմաթիւ քաղաքներ, աւաններ ու գիւղերն ալ, որոնցմէ իւրաքանչիւրը իր արտադրութիւնները կրնայ փոխադրել իրեն ամէնէն մօտիկ կայարանները արտածութեան համար եւ ընդունիլ անոնցմէ ներածման նիւթերը սպառման համար:

Երկաթուղիի այս հսկայ գծին ընծայելիք իւր բաւոր առաւելութեանց վրայ յիշենք նաեւ զիւրաւորներէն մէկն ալ թէ, այլ եւս ստիպաւորապէս կրնայ վերջ գտնել անոնց անցնելիք ու սահմանակից երկիրներէն, որքան պընտրեալ երաշտութիւն պատահի. զի ինչպէս առատութեան տարիներու մէջ արտածելիք արմաթները այլուր պիտի փոխադրէ երկաթուղին, նուազութեան տարիներն ալ փոխադարձաբար դուրսէն ներս կը բերէ ներքին սպառման պէտք եղած ուտելիքը:

Մ. ՆԱԹԱՆԵԱՆ

Ա.Զ.Գ. ՀԻՒԱՆԴԱՆՈՅԻՆ ի նպատակաւ մակերազուած Նուագահանդէսը, որ տեղի պիտի ունենայ Մարտ 24 — Ապրիլ 6ի կիրակի օրը, զեղարուեստական տեսակէտով շատ փայլուն ըլլալ կը խօստանայ եւ նիւթալիք յաջողութիւնն ալ տարակույս չունինք թէ անոր համապատասխանէ Հոգաբարձութեան եւ Կարգադիր Մասնախումբին ակնկալութիւններուն:

ՊՈՆՁԵՆԵՐ

Սիրոյ պայքարը մղղեղէն
Ա՛յ յոգնեցաւ արտիկս յիմար .
Ու խոնջ հոգւոյս մէջ յուլաբար ,
Բոլոր իղձերս կը նիրհեն :

Խոնջ՝ աչեքս ալ , զորս մեղկօրէն
Յածեցի հո՛ս հոն սիրալաւ .
Սիրոյ պայքարը մղղեղէն՝
Ա՛յ յոգնեցաւ արտիկս յիմար :

Գերեզմանը կերակւեմ լա՛ր ,
Հեռացումը կեանքի ժխտեմ ,
Ուր դառն հոգեր կը պաշարեն
Սրբս՝ որ երբեմն հանոյ՜ կըզգար
Սիրոյ պայքարը մղղեղէն :

ՎԱՐԴԳԵՍ

ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆՆԵՐ

Հանդէս Ամսօրեայ , — Վիէննայի Միւլթարեաններուն «բարոյական , ուսումնական , արուեստագիտական» ամսաթիւերը , — իր Մարտի թիւին մէջ հրատարակած է երկու Դրական Թղթակցութիւններ Կ. Պոլսէն , որոնց մէկը՝ «Թաթուլ Վանանդացի» ստորագրութեամբ՝ օրուան գրական ու բանասիրական հարցերը շօշափելով , կը խօսի նաեւ Մասիսի նորավէպի մրցումին վրայ , եւ միւսը՝ Դր. Մալխասի կողմէ գրուած՝ միմիայն այդ մրցումովը կը զրաղի . Այդ Թղթակցութիւններուն առաջինը թէեւ ամբողջ քննադատական մը ըլլայ , Յովհ. Սեթեանի Մերժումը Վ. Յարութիւնեանի Մերուկին խղճահարուրթիւնը էն վեր դասող , — քննադատական մը՝ տեղ տեղ հեղինակ բայց բարեմիտ ակնարկութիւններով ու դիտողութիւններով համեմուած , — ու երկրորդն ալ իր քննադատականի բաժինը պարունակէ , յօդուածադրին առանձնայատուկ եղող կարուկ ու գրաւիչ ոճովը , առով հանդերձ երկուքն ալ կը կրեն ուսումնասիրութեան մը գրողը եւ այն քննադատականներէն են որոնք կը քաջալերեն՝ փոխանակ

վնասեցնելու եւ կ'ողեւորեն՝ փոխանակ ընկճելու գրողը որ իրենց դիտողութեանց առարկայ կը դառնայ : «Թաթուլ Վանանդացի» անհամապատասխան կը դանդն նորալիկ բառը Վ. Յարութիւնեանի գրուածքին դոր կը սահմանէ իբր «Պարզ գիւղական պատմութեամբ (Dorfgeschichte) մը» կամ «Շինական , պատմութիւն մը» : Սրաամբոմբ ցաւ մը պատերէ զինքը — իր իսկ բառերով — տեսնելով . 32 վիպակներուն մէջէն ամէնէն յաջողակը ներկայացունան միջակութիւնը : Ո՞վ իրեն ներշնչած ըլլալու է այն սխալ գաղափարը , թէ այս Մրցումին ենթարկուելիք նորավէպները գրուիս-գործողներ , գրական հրաշակերաններ պէտք էր ըլլային : Յայտարարուեցաւ արդէն , ժամանակին , թէ այս տեսակ մրցումներու միակ նպատակն է նոր գրողները քաջալերել առաջարկուած ճիւղին մէջ , որ այս անգամ նորավէպին վիճակեցաւ : Եւ միթէ «չինական պարզ պատմութիւն» մը չէ՞ր ժողովարարին 500ական ֆրանքի մրցանակը ստացող երկու նորավէպներէն մէկն ալ , La rente viagère , որուն թարգմանութիւնը հրատարակեցինք Մասիսի նախորդ թիւով : Այն անչափելի համեմատութիւնը որ կայ 5000 ու . . . 32 մրցակիցներուն , ֆրանսական գրականութեան եւ մերինին միջեւ , կը նշմարուի՝ միթէ Կենսաբոլորական եւ Մերուկին խղճահարուրթիւնը միջեւ : Խոր անդունդ մը , բաղդատութեան երկու անհասանելի եզրեր պէտք էր որ բաժնէին այդ երկու գրուածքները , մինչդեռ առանց նախապաշարումի դիտող մը պիտի կրնար ըսել թէ Bénédictի նորավէպին քով զգեստնուելու , ոչնչութիւն մը համարուելու աստիճան տկար արտագրութիւն մը չէ՞ր Վ. Յարութիւնեանին նորավէպը : Կը փափագէինք որ ձեռնհաս գրիչներ իրենց անաչառ դատաստանը ընէին այս մասին , — քանի որ առիթը եկաւ ըսելու , — երկու «մրցանակաւոր»ներուն վրայ յայտնելով իրենց բաղդատական կարծիքը որուն առջեւ բաց են Մասիսի էջերը : Պարզ ժամանց մը ստեղծելու , ընթերցողները հետաքրքրելու նպատակ ու բնութիւն չունէր բնաւ նորավէպի այս Մրցումը , այլ անով՝ զարկ մը տալու գրական այս սեռին մշակմանը մեր մէջ , եւ

որչափ ուեղի գրուի անոր վրայ՝ այնչափ աւելի լուսարանութիւն եւ օգուտ առաջ կուղայ գրական տեսակէտով :

Ուրախալի երեւոյթ մըն է որ Հանդէս Ամսօրեայի պէս բանասիրական լուրջ Հանդէս մը մասնաւոր ուշադրութեան առարկայ կը դարձնէ նորավէպի մրցումին խնդիրը — որուն յիշատակութիւնը ընկէ իսկ զգուշացող թերթեր (*) ունինք այստեղ, — եւ գէթ քննադատութեան ձեւին տակ կը զբաղի երկու նորավէպներով ալ, թէեւ իր տեսութիւնը անհամապատասխան ըլլայ մեր քննիչներուն տեսութեանը ու եղբակացութեանը :

Գր. Մալխաս, որ կարճ ժամանակամիջոցի մը մէջ հին համբաւ ունեցող կարգ մը քննադատներ գլեց անցաւ մեր մամուլին մէջ՝ իր առողջ գրութեանը վրէժով, հաճոյք մը սեպեր է իրեն «Գրական Ժամանց» մը նուիրելու Վիէննական Միթթաբեանց Հանդէսին մէջ Մալխի գրական մրցումին, եւ Յարութիւնեանի ու Սեթեանի նորավէպները կ'ուսումնասիրէ նոյնքան ուշադիր կերպով որքան պիտի ըլլար՝ Հայր Ղազարեանի մը թարգմանութեան կամ որ եւ է երկասիրութեան առջեւ : Իր քննադատութեանց ու գնահատութեանց հաւասարապէս առարկայ դարձող երկու նորավիպագիրներն ալ՝ մեր լուր որ դրասէր՝ ընթերցողներուն հետ՝ պիտի հետաքրքրուին ու զո՞հ պիտի մնան անշուշտ, կարդալով երկուստեք քննադատին անաչառ դատողութիւնը որուն մեծագոյն մասը կ'արտատուէր այսօր : Երկուքին համար ալ պատուարեր է իր եղբակացութիւնը, — մեր լրագրական ու գրական հրատարակին վրայ անոնց յաճախակի երեւնալուն փափաղը, — զոր Մալխի խմբագրութիւնը կը կրկնէ այս ասօրի :

S. Ա.

(*) Արեւելի մէջ երկուք Արմէն, Յուսակ եւ Արամ Անտոնեան զանազան առիթներով գրեցին այս մրցումին վրայ, գնահատական տողերով, եւ Մանգրաւէի Էֆեսար ալ առանձին յօդուած մը նուիրեց Յարութեան եղբայրներուն, Վահան Յարութեանի մրցանակ շահելուն առթիւ :

ԳՐԱԿԱՆ ԺԱՄԱՆՑ(*)

Ծերուկին Խղճահարութիւնը ուշադրութեամբ մըն է դաշտային կեանքի ապրող մանրամասնութիւններով՝ որոնք այնքան քիչ ծանօթ են բուն Պոլսեցիին, Երանի՝ թէ օրինակէն խրախուսուելով, դաւառներու ամէն անկիւններէն տեղային այսքան կեանք հետող գրութիւններ՝ որոնք իրենց մասնաւոր նկարագիրով, ունին եղբակցութեամբ, դիտողութեանց նորութեամբ, պակասած կարող մը պիտի մտցնէին մեր anémique ըսուելու չափ հիւժուած գրականութեան մէջ : Սրտածմիրկ սիրերգներով կը հալին ու կը մաշին մեր միտքերը, աշխարհի երես տեսնողը՝ իր չորս պատերուն մէջ փակուած երեւակայութիւնը ի զուր կը զրգուէ չորս յանդարմարցնելու համար, եւ ասով առաջ կուգան տխտական վիճակ մը, հիւանդ գրականութեան մը վախժարատաղիւթիւններ : Իսկ արձակի մէջ՝ կարծես այլ եւս բան չմնայ զիտուելիք ու գրուելիք, Ժամ է որ գաւառական գրականութեան պատուաստը դարձնէ :

Ստեփան արար գրական ամբողջ համակրութիւնս : Դաշտային առաջին պատկերը շատ մասնաւոր է իր որոշ եւ յատուկ գոյններով : Բնութեան կոշտ աշխատութիւններով թողուած մշակին հոգեբանութիւնն ալ ուշադրութեանէ չվրիպիր : Բայց կայ ամբողջութեանը մէջ մասնաւոր բան մը . չգիտեմ թէ մը, միամտութիւն մը, ըսեմ, որ կը մասնակի թէ արուեստագէտի ճարտարութիւն կը պակսի հոն :

Օրինակի համար՝ երբ Ստեփան աղբոր գլուխը «կ'ստատաւէ քարէ քար՝ քառուկէ գնդակի մը պէս», ընթերցողը կը ապագէ դանկին խորտակուելուն եւ ուղեղին դուրս յայտնուելու ներկայ գտնուիլ : Բայց այս յուրմը ի զուր կ'այլայլէ անոր սիրտը վէպի մինչեւ վերջը, ուր հասնելով՝ վերջապէս կը տեղեկանայ թէ «վերքերը թեթեւ էին բերախաւարար» : Հաս՝ վիպագիրը կը միշտ

(*) Հանդէս Ամսօրեայէն քաղուած :

վիրաբուժի աշակերտ մը՝ որ առաջին անգամ ներկայ կը գտնուէր դիաբոլոմիտի դասին, եւ կը սոսկայ ճեղքուած է :

Յետոյ՝ «կիրամուտքին» մեր վրայ ազդած տպաւորութիւնը շատ թեթեւ է, եւ Ստեփանն աղբոր խղճին բուն վիճակը աւելի զօրեղ կերպով պիտի չեղտուէր՝ եթէ հակադիր պատկեր մըն ալ գտնուէր «կիրամուտքը անխղճօքէն աւրոյնսրու» : Այդ պատկերը կրնար յարմարօրէն դրուիլ գեղի փողոցին մէջ մտած պահուն, ենթացողինք տեսարան մը՝ ուր անգործ կիները «դրացիին վրայ դրաւորութիւն կը յերկրէին» : Այս դադափարը՝ որ զեղեցիկ է, մնացած է հոն խորհրդածութեան ձևի տակ . պէտք էր աչքի ներկայանալ գործողութեամբ, շարժմամբ, կնկան կարճ կոխով մը :

Ասոնք են զլսաւորաբար ըսելիքս «կրտսեր»ին վրայ՝ զոր ջերմապէս կը շնորհաւորեմ, ինչորեւիթ իրմէ որ աւելի ստէպ ժամադիր ըլլայ մեր տեղական մամուլին մէջ :

* * *

«Երէջը» հին ծանօթ մըն է ինծի : Օրթադիւղի մը, եւ ինչ որ աւելին է՝ դրարարի վարպետ : Չէի դարմանար եթէ յիշողութեանէն կ'աւելայի, քանի որ իր այնքան յոռի աշակերտն էր դասին մէջ : Աչքերուս առջեւն են դեռ՝ ճանճի թաթերու նման գիրովը տող ընդ մէջ սրբաբնութիւնները՝ այնքան խղճով կատարուած, եւ երբ կը տեսնեմ որ Մալկարացին կը քարընդոտնէ Օրթադիւղին, չեմ ներեր Ջօհրապին — որ ինծի պէս Օրթադիւղի էր, դպրոցակից մը՝ թէեւ ոչ դասակից — մոռցած ըլլալը այն առածը՝ որուն համաձայն «մարդ Օրթադիւղի կը ծնի՝ վերջէն չըլլար» : Թերեւս Ջօհրապ naturalisé մըն էր հոն, անծանօթ կէտ մը ինծի համար :

«Լեւոն՝ լրբան չի հանդիպիր, մարդ՝ մարդու կը հանդիպի» եւ «Ո՛չ է աշակերտ առաւել քան զվարդապետ իւր», երկու առակներ որոնց ճշմարտութիւնը անգամ մը եւս կը հաստատուի ներկայ ստիթով :

Բայրընիստ, միսթիք, միլտմադճոտ, անուանեցէք զեռնչպէս կ'ուզէք Յովն. Սեթեանը, այդ ձեր գործն է : Իմ ալ է հիմայ նկատել

տեղ դայն իր Մերժոռմին մէջ, որ ամէն տեսակէտով զեղեցիկ նորաւէտ մըն է, հոգեբանութեամբ լեցուն : Հոն՝ խրաքանչիւր դերասանի ուղեղին ծաղկերը քակուած, պարզուած են ընթերցողին աչքին առջեւ : Գրիգոր աղան՝ իր մեծ ճարպկութեամբ եւ քիչ խղճահարութեամբ, Իզար հանրմ՝ իր յիսուն տարեկան ամուրի կեղծաւոր աղջկան ննդամտութեամբ — Պալլաքի Cousine Betteին մանրանկարը — Միհրան աղան՝ բարի եւ առաքինի մարդու լաւատեսութեամբ, Արմենակ՝ բանագողի փայլարը, որ կը վստայ հայ գրականութեան մէջ, անանկ որ Արմենակի յատուկ «ժառանգականութիւնը» սոհմային ժառանգականութիւն մըն է մեր մատենագրութեան տեսակէտով . վերջապէս, Հերմիէն՝ համակրելի զո՞ն մը համբաւի մենամուլութեան այդ սկիւպիկ Արմենակին :

Մարդկային documentsներու հաւաքման մէջ՝ բաւական սուր զիտողութիւն, եղելութեանց ձուլման մէջ՝ բանաստեղծի երեւակայութիւն, զէպքերու արամաքանական յաջորդութիւն, վէպին գոհացուցիչ երկայնութիւնը — 7 1/2 էջ փոխանակ վեց պահանջուած էջերուն — ասոնց ամէնքն ալ նպաստաւոր վկայութիւններ են հեղինակին համար : Միհրան աղային աղջիկներուն անօթութենէ մեռնելու պարագայէն դատ՝ որ ճշմարտաման չերեւար, մնացած դէպքերը բնական ընթացք մը ունին :

Աւելցուցէք յստակ ոճ մը, տեղ տեղ զարդարուն, յաճախ գունաւորուած ինչպէս աղջիկներուն դէմքը, «բոսորալաւ վարդ մը՝ ճերմակ վարդի լայն թափանչոյ թերթի մը ետեւէն դուշակուած», կրկին երաշխաւորութիւն գործին յաջողութեանը :

Ըսել չէ թէ ոճը աւելի կորովի չէր կրնար ըլլալ . կարծես թէ տեղ տեղ կը թողնայ, կ'անօտարնայ, եւ բացարձակ երեւակայութեամբ սնած բանաստեղծին լեզուն՝ անդար կը ծփայ, չի հաստատուիր կոշտ իրականութեան ճիշդ ձևերուն կաղապարին մէջ :

Քիչ մը աւելի խնամք անօգուտ պիտի չըլլար . պարբերութիւններու մէջ կան փոքր քարի, աւաղի կտորներ՝ զորս մաքրել պէտք էր . ցորենին մէջ յարդի կտորներ մնացած

են, որոնք պիտի անհետանային՝ եթէ անգամ մըն ալ հովին նետուած ըլլար :

Երբ այս յատկութիւնները կը միանան զրազէտի մը մէջ, իրեն դէմ մէկ մեղանդրանքի ձայն կ'ընայ բարձրանալ . թէ ինչո՞ւ յաճախ չի ներկայանար հրապարակի վրայ :

ԳՐ. ՄԱԼԽԱՍՍ

ՊՐՈՒՍԱՅԻ ԱՌԱՋՆՈՐԴԸ

ԵՒ ԻՐ ՄԱՏԱՆԻՆ

Պրուսայի Առաջնորդը նամակ մը ուղղած է մեզ, — տեսակին մէջ նմոյշ մը, — զոր կը հրատարակենք անփոփոխ .

Ի ՊՐՈՒՍԱ, 11 Մարտ, 1902

Մեծայարգ Խմբագիր Մաւիսի

Ընթերցայ այն դիտողութիւնները՝ զորս Մաւիս պատուական շարքաբերքիդ 10 բուռն մեջ տողած էիք, ի պատասխանի իմ երկտող հրատարակութեան՝ Սուրհանդակ լրագրոյ մէջ, Զպիտի գրեթէ երբեք այս մասին, եթէ Պրուսայէ տրուած սխալ տեղեկութիւնք ճիշդ կադրէին զիս առ այդ, Գիտնալ պարտիք քեզ, մատանիին գոյութիւնը տարի մը բոլորեկ շատ հեռի չէ . ես ցարդ ոչինչ գրած էի Մատանիին՝ երեսուն եւ հինգ ոսկի արժողութիւն ունեցող մատանի մ'էր, եւ ոչ քեզս ձեր գիտցածին (եթէ երբեք չարամտօրէն չէք մեկնած) լոկ ոսկի : Գալով ձեր այն «առաքինութեան մրցանակ»ին, մրցանակներու արժանանալու տեղը երբեք չեմ ունեցած . ամէն անոնք՝ որոնք զիս ի մօտոյ ճանցցած են, կը վկայեն քեզ, փառասիրական ձգտումներէ բոլորովին զերծ, հրապարակական եւ ժողովրդային ամէն գովաստանքու եւ պարսաւանքներու մագի չափ կարեւորութիւն չառնող միակ (!) եկեղեցականն եմ : Կը ցուսիմ ըսել քեզ, չարաչար կը մեկնէք իմ գրածս . «անտարբերութիւն» բառին բուն իմաստը՝ այս կէտին մէջ ոչ դուք եւ ոչ ալ ձեր հետաքրքիր կոչած հասարակութիւնը կը հասկնայ . միայն եւ միայն Պրուսացին կը հասկնայ : Ապրուստիս մասին ո՞ր պարագային մէջ գանգատ յայտնած եմ : Ուրիկ կը մակածէք այս հետեւութիւնը . բարեօրէն խմբագիր, իրողութիւն մը իր բուն գոյնովը երեւան հանելն՝ ապրուստի գանգատ ընել է միթէ : Եւ տրամաբանութիւն : Գալով իմ քննիւ մէջ եկեղեցական եւ կրթական բարեօրէնաց՝ զորս կը յիշէք, ատոնց համար ձեր հետաքրքիր հասարակութեան համարատու լինելու պարտականութենէն ազատ կը զգամ ինքզինքս :

Որոնք որ շատ կը հետաքրքրուին, անգամ մը Պրուսա գալու եւ եկեղեցիներն ու դպրոցները այցելու ձանձրութիւնը քո՞ղ ոտանձնել բարեհաճին : Թո՞ղ

չլապաղին, կը խնդրեմ, փութան գալու : Զեր երեսկայած հարուստ քեմերէն դիզած մեծաքանակ գումարներս ձեզ եւ անոնց պիտի բաշխեմ :

Մնամ աղօթաբար
ՅՈՒՂ. ԵՊԻՍԿ. ԱՐՇԱՐՈՒՆԸ

Եթէ այս տիպար-գրուածքին ամէն մէկ պարբերութիւնը առնել ու պատասխանել հարկ ըլլար, Մաւիսի քանի մը էջերը պիտի գրաւուէին, ինչ որ չարմէր : Կը զարմանալ միայն թէ, Արշարունի, եպիսկոպոս, որ կը յայտարարէ թէ ինքը «գովասանքու եւ պատասխանքու մագի չափ կարեւորութիւն չառնող միակ եկեղեցականն է» ինչո՞ւ այդքան լռեցիկ է Մաւիսի մէջ հրատարակուած խմբագրական քանի մը դիտողութիւններէն զտրա պատու կը նկատէ անշուշտ, քանի որ չարմէն տուութիւն կը տեսնէ անոնց տակ : Իր միութիւնքական տողերը չեն լուսարաներ, սակայն ո՛չ մեզ ո՛չ ընթերցողը Պրուսայիներուն անտարբերութեանը մասին որուն վրայ կը ծանրանայ այսքան :

Մնաց որ, Արշարունի, եպիսկոպոս Մաւիսի նախորդ թիւին մէկ էջը միայն կարդացած ըլլալ կերեւայ, առանց բնաւ աչք մը ածած ըլլալու ուրիշ մէկ էջին վրայ (Յուշահանգ) որուն մէջ իր հրաժարման խնդիրն ալ յուղած էինք : Զէ՞ր արժեք որ գէթ երկու բառ ալ անոր նուիրէր :

Իրողութիւն մը կայ մէջտեղը, որուն վերայէն Պրուսայի առաջնորդը չի կրնար լրագրութեան ու հանրութեան ուշադրութիւնը վերադարձնել, իր գոցուցած մասնին էլ պակաս արժէքը մէջտեղ դնելով, եւ նոյնիսկ «իբր զիզած մեծաքանակ գումարները բաշխելու» պող կատակներ ընելով, Արշարունիութիւնն է՝ իր հրաժարիլը առաջնորդական թեմէ մը որուն վրայ եպիսկոպոս ձեռնադրուեցաւ : Որ եւ է պատուական տալ այդ հրաժարականը անարդարանալի է : Եթէ ինքը ապրուստի գանգատ չունի, եթէ եկեղեցի ու դպրոց բարեկարգ վիճակի մէջ կը պահէ, tant mieux ! : «Ուստի ու անշուշտ խնդիր եկեղեցական» բառերով այս կամ արթնութիւնն մէջ փառաբանուիլը բաւական չէ նորապսակ եպիսկոպոսի մը արժանիքը վերադարձնելու համար . պէտք է իրական արդիւնք

ցուցնել . պէտք է յարատեւել իր հովուական պաշտօնին մէջ : Փառէն վարդապետ միջեւ Սղերդ երթալ յանձն առաւ ու մնաց հոն , առաջնորդ ընտրուելով . Մուշեղ վարդապետ Ակն ու Արարիկի գնաց ու ընտրուեցաւ առաջնորդ . նոյնպէս Ջաւէն վարդապետ Կարին : Այս եւ ուրիշ երիտասարդ եկեղեցականներ միթէ նիւթապէս աւելի՞ ճոխ վիճակ մը ունին քան Արշարունի եպիսկոպոսը որ ստորուն փողին թոթուել կուղէ Ողիմպոսի ստորոտը . . . Գնալըի ծովափը գալ հանգստանալու համար այսքան շուտ :

* * *

Կերեւայ թէ Արշարունի եպիսկոպոս չըրջարեալանի մը ձեւը տալ ուզեր է իր այս նամակին որուն մէկ օրինակը հրատարակուած տեսանք հինգշաբթի առաւուսն Սուրհանյակի մէջ : Կը սպասենք որ մեր պաշտօնակիցը գէթ ինք լուսարանէ սա հոչակաւոր մատանիին պարագան , քանի որ այսքան փութկոտութեամբ կը հիւրընկալէ Մասիսի հասցէին ուղղուած շրջաբերական-նամակը , միեւնոյն ատեն իր կարծիքն ալ յայտնելով Պրուսայի առաջնորդին հրաժարմանը մասին , ինչպէս չա՛տ բայցորոշ կերպով պարզեց Արեւելի իր տեսութիւնը՝ Արամ Անտոնեանին «Անշարժ կալուած»ով :

Սղեկա , դեռ նոր աւարտած իր «Աւարտի տըջանը» , կարօցած քլալ կերեւայ այն հեռաւոր երկիրները զորս այնքան զգալուն ու կենդանի տոյնով նկարագրեց , եւ իր կարօք կ'առնէ . . . չինական նորակէպի մը բարգամուրեքամբ զոր Մասիսին դիմած հրատարակութեան համար .

ՃԵՐՄԱԿ ՀՈՎԱՀԱՐՈՎ ՏԻԿԻՆԸ

— 00000 —

(ՉԻՆԱԿԱՆ ՆՈՐԱՎԷՊ)

Չուանկ-Յէն , Սուանկիի ուսումնական մին էր , որ իմաստութիւնը կը հասցնէր մինչեւ փախչալը կորնչելի բաներէն , եւ իբր թունդ Չինացի , չէր հաւատար յաւիտենական բանե-

րու , եւ իր հոգին սիրիւելու համար , իրեն ուրիշ բան չէր մնար , բայց եթէ խուսափի՝ հասարակ մոլորանքներէն մարդոց , որոնք կը աքնին , տիրանալու համար անօգուտ հալըստութիւններու : Բայց այս ինքնասփոփումը չատ խոր ըլլալու էր , որովհետեւ իր մահունքնէն ետքը , անիկա երջանիկ ու նախնիքի արժանի հոչակոչեցաւ :

Ու , այն օրերուն , երբ անձանթ ոգիներէ վարուած , իր կեանքը կ'անցընէր կապոյտ երկինքի մը տակ , ծաղկաւէտ թփիկներու , ուռնիկներու եւ պամպուկներու մէջ , Չուանկ-Յէն , սովորութիւն ունէր , երազելով , չըրջադաշնու այդ երկրին մէջ , ուր կ'ապրէր առանց գիտնալու թէ ի՛նչպէս եւ ի՛նչու : Առաւ մը , երբ պատահմամբ կը թափառէր Նամ-Հօա լեռան զառիթափներուն վրայ , անդգալապէս ինքզինքը գտաւ չիրմաստանի մը մէջ , ուր մեռելները , երկրին սովորութեան համեմատ , կը հանգչին կոխկռուած հողի սարակներու տակ : Տեսնելով անթիւ չիրիմները , որոնք մինչեւ հորիզոնէն անդին կը տարածուէին , գիտունը մարդկային ճակատադրին վրայ մտածեց :

— Աւա՛ղ , — ըսաւ , — ահա՛ քառուղին՝ ուր կը հանգին կեանքի բոլոր ճամբաները : Երբ մարդ անգամ մը մեռելներու կայանը տեղ գտաւ , ա՛լ ետ չի կրնար դառնալ :

Այս մտածումը այնչափ նորանշան չէ , բայց բաւական կը բացատրէ Չուանկ-Յէնի փիլիսոփայութիւնը , ինչպէս նաեւ Չինացիներուն : Չինացիները միակ կեանք մը միայն կը ճանչնան , — այն կեանքը , ուր կը տեսնեն արեւուն տակ ծաղկիլը փեռնունաներուն : Գերեզմանին մէջ մարդոց խաղաղ քունը , կը միտիթարէ կամ կը արտմեցնէ զիրենք , իրենց լաւատեսութեան կամ մեղամաղձոտութեան հակամէտութեան համեմատ : Ասկէ վատ , մտազրօսութեան համար , անոնք ունին կանանչ եւ կարմիր չաստուածներու բազմութիւն մը , որոնք երբեմն կ'ողջնցնեն մեռելները եւ զուարճալից կախարդանքներ կ'ընեն : Բայց Չուանկ-Յէն , որ փիլիսոփայներու դոգմազարիտ աղանդին կը վերաբերէր , ճենադալիէ վիշապներուն միտիթարանքին չէր ապաստան : Երբ , ասանկ , խելքը գերեզմաններ

բուն վրայ , կը պտտէր , յանկարծ հանդիպեցաւ կնոջ մը , որ սուգի հագուստներ հագած էր , կոշտ կերպասէ առանց կարի երկայն ճերմակ չըջագեցած մը այսինքն : Գերեզմանի մը քով նստած , ճերմակ հովահար մը կը շարժէր , գետինը՝ տակաւին նոր գոցուած հողակոյտի մը վրայ :

Այսքան արտասովոր արարքի մը շարժաբիթը հասկնալու հետաքրքիր , Չուանկ-Յէն բարեւեց մանկամարդ կինը , եւ ըսաւ անոր .

— Կրնայի՞ համարձակիլ , Տիկին , հարցնել ձեզ թէ ո՞վ պառկած է այս գերեզմանին մէջ , եւ ինչու՞ համար այդչափ կը յոգնիք հովահարելու համար հողը որ դայն կը ծածկէ : Փիլիսոփայ եմ ես : Պատճառներ կը փնտռեմ , ու ահա պատճառ մը , որուն գաղտնիքին խելքս չի դորեր :

Մանկամարդ կինը կը շարունակէր շարժել իր հովահարը : Կարմրեցաւ ան , գլուխը ծռեց եւ մտաւայ քանի մը խօսքեր , զորս գիտունը չիմացաւ բնու : Քանի մը անդամներ կրկնեց իր հարցումը , բայց ի զուր : Մանկամարդ կինը բնաւ ուշադրութիւն չէր ըներ անոր , եւ իր հոգին ամբողջովին փոխանցուած կը թուէր ձեռքին՝ որ հովահարը կը շարժէր :

Չուանկ-Յէն , վշտակրած , հեռացաւ : Թէպէտ հանդուած էր թէ ամէն բան ունայնութիւն չէ , բայց բնական հակամիտութիւն մը ունէր փնտռելու շարժաբիթները մարդկային արարքներուն , եւ մասնաւորապէս կնիկներուն : Այս պզտիկ արարածը , իրեն կը ներշնչէր չարոգի՝ բայց շատ բուռն հետաքրքրութիւն մը : Դանդաղօրով , կը շարունակէր իր չըջագայութիւնը , ետ նայելով երբեմն , տեսնելու համար տակաւին հովահարը , որ մեծղի թիթեռնիկի մը թեւին պէս , կը ծեծէր օդը , երբ , յանկարծ , պառաւ մը , զոր առաջ չէր տեսած , նշան ըրաւ անոր , հետեւելու իրեն : Տարաւ դայն միւս հողակոյտերէն աւելի բարձր հողակոյտի մը շուքին տակ , ու ըսաւ անոր .

— Լսեցի իմ տիրուհիս հարցում ընենիդ որուն չպատասխանեց ան : Բայց ես ինքս , բարեսիրական բնական զգացումով մը , պիտի գոհացնեմ ձեր հետաքրքրութիւնը , յուսովով որ , դուք ալ փոխադարձապէս բարեհաճու-

թիւնը պիտի ունենաք ինծի տալու բան մը , որով կեանքս երկարելու համար մոգական թուղթ մը առնեմ քուրմէն :

Չուանկ-Յէն քսակէն դրամ մը հանեց , եւ պառաւ սապէս խօսեցաւ .

«Այդ տիկինը զոր դուք տեսաք գերեզմանի մը վրայ , տիկին Լիւն է , այրին Թաանունով գիտունի մը , որ մեռաւ , տասը հինգ օր առաջ , երկարատեւ հիւանդութենէ մը հետք , եւ այդ գերեզմանը իր էրկանն է : Խանդոտ սիրով մը կը սիրէին զիրար , եւ նոյն խել հոգին փչելու ատեն , Թաօ չէր կրնար որոշում տալ անկէ բաժնուելու , եւ զայն իր ծագիկ հասակին ու գեղեցկութեան մէջ ձգել երթալու գաղափարը կատարելապէս անառնելի էր իրեն : Սակայն կը համակերպէր ատոր , որովհետեւ շատ քաղցր բնասրտութեան տէր մէկն էր , եւ իր հոգին յօժարակամ կը համակերպ ստիպողականութեան :

Լալով Թաօի սնարին վերեւ , ուրկէ երբեք բաժնուած չէր իր հիւանդութեանը ատեն , տիկին Լիւ շատուածները վկայութեան կը կանչէր թէ իրմէ հետք չպիտի ապրէր , եւ պիտի ընկերանար իր մահուան , ինչպէս ընկերացած էր իր անկողինին :

«Բայց Թաօ անոր ըսաւ .

« — Անուշիկս , մի՛ ըներ այդ երգումը :

« — Գէթ , — պատասխանեց ան , — եթէ սահմանուած եմ քեռէ հետք ապրելու , եթէ ողինքուն կողմէ դատապարտուած եմ տեսնելու ցորեկին լոյսը , երբ դուն ալ չպիտի տեսնես դայն , գիտցի՛ր որ երբեք չպիտի հաւանիմ ըլլալ ուրիշի մը կինը , եւ մէկ մարդուն մը կինը միայն պիտի մնամ , ինչպէս որ մէկ հոգի մը միայն ունիմ :

«Բայց Թաօ ըսաւ անոր .

« — Տիկին , մի՛ ըներ այդ երգումը :

« — Օ՛հ , Թաօ , օ՛հ Թաօ , գէթ թո՛ղ որ երբնում թէ , ամբողջ հինգ տարի չպիտի ամուսնանամ :

« Բայց Թաօ ըսաւ անոր .

« — Տիկին մի՛ ըներ այդ երգումը : Միակ երգում ըրէ հաւատարմօրէն պահել իշխատակս , մինչեւ հողը չորնայ գերեզմանի վրայ :

«Տիկին Լիւ մեծ երգում մը ըրաւ, եւ բարի թափաք փակեց աչքերը, ա'լ չբանալու համար, Տիկին Լիւի յուսահատութիւնը երեւակայելի ամէն բանը անցաւ: Աչքերը վառ-թարացան կսկծոտ արցունքներէ: Իր եղունգներուն մանարտիկ դանակներովը, երեսներուն թաւիշը կը ճանկոթէր: Բայց ամէն բան կ'անցնէր: Ու այս վիշտին յորձանքն ալ անհետացաւ: Թափ մահուընէն երեք օր ետքը, տիկին Լիւի տխրութիւնը մարդկային եղած էր ա'լ: Լսեց որ Թափ աշակերտներէն մէկը, երիտասարդ մը, կը բաղձար իր մասնակցութիւնը յայտնել անոր թողած սուգին: Մտածեց որ չընդունիլ չէր կրնար ընել: Վշտակցութեամբ ընդունեց զայն: Գեղադէմ ու շատ շնորհալի մէկն էր այս երիտասարդը, Տիկին Լիւի վրայ խօսեցաւ ան բաւական, ու քիչ մըն ալ Թափ վրայ: Ըսաւ անոր թէ, քաջ կը դգար զինքը սիրելը: Տիկին Լիւ ձգեց անոր՝ որ ըսէ այդ բանը: Երիտասարդը խոստացաւ կրկին գալ: Անոր սպասելով, տիկին Լիւ, իր ամուսնոյն հոգաւորին քով նստած, ուր տեսաք դուք զինքը, ամբողջ օրը կ'անցընէ չորցնելու գերեզմանին հոլը, իր հովանարին շունչով»:

Երբ պառաւը լմնցուց իր պատմութիւնը, Չուանկ-Յէն գիտունը մտածեց.

— Երիտասարդութիւնը կարճ է: Յանկու-թեան խայթոցը թեւ կուտայ երիտասարդ կիներուն եւ մարդոց: Մնաց որ, Տիկին Լիւ պարկեշտ մէկն է, որ չուզեր դրժել իր երդումը:

Թարգմ. ՍԳԷԼԼԱՍ.

ԱՆԱԹՈԼ ՖՐԱՆՍ

ՉՄԻԱՆ ՔԵՐԹՈՒԱԾԸ

Ա'լ ձմեռ է:

Վերջին տերեւները ինկան. եւ կանանչութիւնները զեղնելով մեռան՝ աշնան ծոցին մէջ:

Խոնաւ մշուշները կը ծածկեն ջուրերու խորհուրդները. եւ երկինքէն ժանեակներ կը կախուին, ձերմակ ամպի եւ գորշ մշուշի, ժանեակներ՝ որ տխրութիւնը կըստուերացընեն գեանին վրայ:

Մտածումներ որ կը մտնէ՝ կրակաբաններու բոցին դէմ, եւ աչքերու բոցին դէմառ դէմ՝ սիրտեր ալ, որ չեն սիրեր:

Ո՛հ, արցունքները քար կը կտրին թարթիչներու եղերքը, սառի դրասանդներու պէս՝ տանիքներն ի վար:

Կը ձիւնէ, եւ ցուրտ է:

Ձիւնէ սիրտ մը՝ սրտին ձիւնին մէջ սառած:

Իմ սիրտս՝ քու սրտիդ մէջ, ո՛վ իմ սէրս, ո՛վ իմ հաւատքս, ո՛վ իմ մահս:

Կը ձիւնէ՞ նաեւ քու սրտիդ մէջ:

Ո՛վ կին:

* * *

Ձմրան խորհրդապատկեր մը:

Թաց մայթերուն վրայ, անձրեւին դանդաղ շիթերուն տակ, ամբոխին մէջէն՝ կինը կը քալէ. եւ իր ետեւէն կը վազեն մանիշակավաճառները, ինչպէս նաեւ բոլոր տենչոտ նայուածքները:

Բայց ան, յաղթական ու պչրոտ, կ'անցնի, եւ իր ետին կը ձգէ ընդարձակ բոյր մը, ձօքէյ-Գլըպի եւ կնկան մտերիմ արտաբուրում մը, որ կը համբուրէ պաղ օդը՝ խոստմնալից, ցնորքի՝ ովկէան:

Ու, զիպըլինին մէջ փաթթուած, ժամագրութեան մը հասնելու խուճապով, կերթայ ան՝ գեղեցիկ ու ինքնավստահ, հանգրիճելով ու մոռտ կտոր ազդրերուն վրայ փակցնելով արդէն. նեղկուկ չըջաղկեալը, որուն մէջ կը սնդուսուի զգլխիչ ֆրուֆրու մը:

Անգաղանապահ ցուցադրութիւն մըն է աս է՛ն յանդուգն սրունգները կաղապարող մետաքս գուլպայի, եւ ծաղկեփունջի նմանող լեշակագոյն ծընգակապի, ու դեռ չեմ գիտեր ի՞նչ զիւթանքի կասկածին որ ծայր կուտայ:

Օ՛հ, անակնկալ մըն է ամէն կին:

Դէպի հանդէսը վազք մըն է աս:

Փողոցները կը խայտան. զբօսավայրները կը վխտան: Գիշերները կ'արթննան, ու ցերեկները կը նիրհեն:

Փակ սենեակին հոտը, սամավարին շոգին, լուսամփոփին սքօղումները:

Ու բոլոր հայելիները տարփանքներ կ'երազեն:

Մեղաւոր տօնը մը, ձմեռը, ցիւրին ու հովին, անձրեւին ու մշուշին եղանակը :

Զմեռը :

Քաղաքները կ'ոգեւորուին ու զաշտերը կը նիրհեն :

Հազիւ, երբեմն, սրդողած արեւը՝ ամպերուն մէջէն՝ կը նայի . մշիկ մշիկ ննջող մանկիկին ժպիտն է ան . վարդի՝ պատրանք :

Դոյները անորոշ են, գիծերը կը դողդղան, դանդաղ են քայլերը, եւ խուսափող իրերը . ձմրան տպաւորութիւններ են ասոնք :

Երկայն գիշերները անքուն աչքերուն մէջ կը հեղուն իրենց անձկութիւնները . եւ նոր տարիներու անխուսափելիօրէն չար զրոյցները, ծերանալու վախը, չի սիրուելու սարսափը, կը պղտորեն հոգիին միամիտ անըրջանքը :

Զմրան ոգին տխուր է՝ մութին մէջ թափուած արցունքի մը պէս, եւ ափոյն է՝ ճրագի մը նման որ կը հալի ցերեկ ատեն :


... Երջանիկ ծովերուն եզերքը, սիրոյ պատմութիւններէն վերջ, երգումներուն հետ՝ որոնց չեմ հաւատար, ինչպէս կ'ապոյար՝ երկինքին մէջ, ինչպէս ցնորքը՝ վիհին մէջ, մէջ մըն ալ ե՞րբ պիտի հոսեցնէր նայուածքդ սրտիս մէջ՝ ո՞վ կ'ին, մեղքերու ծիածանում, ցաւերու հեռապատկեր :

Ու երջան-կութեան դապանակ :

ՎԱՀԱՆ ՄԱԼԷՋԵԱՆ

ՀԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

ԻԲՐԵՒ ԲԱՆԱՍՏԵՂՇՈՒԹԻՒՆ



Արուեստական տեսակետէ մը նայուելով, իրրեւ միջոց խելացի արտայայտութիւններ ի յայտ բերելու, մասային ըմբռնումներու կամ իտէալներու, ճարտարապետութիւնն ալ գեղարուեստի մէկ ճիւղն է եւ, նկարչութեան ու քանդակագործութեան շարքը կը կազմէ : Այս նպատակով յաճախ որակուած է իրրեւ «քարացեալ բանաստեղծութիւն», «թանձրացեալ ճարտասանութիւն», եւ «սառուցեալ երաժշտութիւն» :

Մեծ ճարտարապետը պէտք է ըլլայ եւ մեծ բանաստեղծ . միայն, ինչպէս գրական բանաստեղծը կ'արտայայտէ իր ըմբռնումները քաղցրանուագ բառերով, կամ բանաստեղծ-նկարիչը ներդաշնակ գոյներով, նոյն պէս ալ ճարտարապետը կ'որոնէ քանդակուած քարեր, ուղիղ ու արուեստականօրէն տեղաւորուած, որպէս զի երեւան հանդգացումներ, — ինչպէս վիշա, երախտադիտութիւն, անձնութիւններ եւ այլ նոյնանման բաներ, որոնք բարձր ազդեցութեան մը համեմատ՝ ճարտարապետին նախնական առարկաներն են :

Ուստի, այն արձանագործական շէնքերէն շատեր, որոնք ամէն դարու մէջ ալ կառուցուեցան ի յիշատակ անոնց դուռ «այնքան երկար սիրած էին եւ շուտով կ'որոնցուցած», ունին իրենց բանաստեղծական ճշմարիտ յատկանիշները :

Ատիկա ձեռնարկ մըն է պարզելու — անուղղակի ու օրինակներով — դադափառներ եւ յուզումներ, որոնք ուրիշ միջոցով մը չէին կրնար ներկայացուիլ : Այս կարգի արձանագործական շէնքերէն գուցէ ամէնէն գեղեցիկը ու հոյակապը հռչակաւոր Դաշ Մահալն է, Ակրաի մէջ (Հնդկաստան) : Սոյն հազուադէպ ու չքնաղ յիշատակարանը շինուեցաւ վիհապետի մը կողմէ ի յիշատակ իր տարփառ կնոջ Մահալի, որ ութերորդ զաւակը աշխարհ բերած ժամանակ մահկանացուն կ'ընէր «20,000 մարդիկ անընդհատ կը գործէին ամբողջ քսան տարիներ» կըսէ Դաւէրնիէյ, որ անոր կառուցման ալ տկանատես եղած է : Շէնքին զլխաւոր մասերը կը բաղկանան սպիտակ մարմարէ, եւ շիրիմը դեռուած սենեկին ու գմբէթին մօզայիգ գործերը ուղեւորներու կողմէ դովնստով ու նիւացմամբ նկարագրուած են :

Շինուածքը բաղկացած է տասերկու տեսակ քարերէ, որոնց մէջ գոճաղմը (lapiz-lazuli) առաջին տեղը կը բռնէ, ու էն ալ թանկագինն է : Այս «Աշխարհի Սպիտակ Հրաշալիք»ին վրայ վատնուած ընդհանուր գումարը կը հասնի քառասուն միլիոն ռուբլի, որ մօտաւորապէս կընէ 3,000,000 անգլ. ֆունտ : Սոյն «քարէ բանաստեղծութեան» դիւրա-

զգած զօրութիւնը ամէնուն վրայ ազդած է ընդհանրապէս եւ Պ. Քէյն իր Աշխարհի Շրջանը գրքին մէջ սապէս կը գրէ . — «Անոր գեղեցկութիւնը զրականօրէն բացատրել ան- կարելի է : Բառեր անօգուտ են : Եկայ որ այնքան զնահատուած չէնքը անգամ մը քննեմ, բայց չուրջը, ներսը, դուրսը բոլորն ալ անթերի գտայ : Աղջիկս կըսէ թէ — ասի- կայ շինուած չէ, այլ սիրուն ծաղկի մը նման աճած : — Այս հրաշալի հաստատութեան ճար- տարապետը եղած է գաղղիացի մը, Օսդէն տէ Պորտո, եւ Դաշ Մահալը, իր չլացուցիչ ու մարգարտանման սպիտակութեան մէջ կը կենայ հոն, մշտադաւար նոճիներու եւ նա- րնջենիներու միջեւ, հնդկական լրթակա- պոյտ երկնակամարը զիմպատկերելով, եւ պէտք է՝ մնայ յաւիտեան, իրր կենդանի վկայ անոր տիրոջ, որ բանաստեղծական հան- ճարի մը էն ծայրայեղ արդիւնքն է :

Իբրեւ մնայուն պատկեր մը այն իրողու- թեան թէ մերձաւոր կապակցութիւն մը կայ ճարտարապետութեան բարձրագոյն ձեւերուն եւ բանաստեղծական աւիւնին մէջ, եւ թէ մեծ ճարտարապետը մեծ բանաստեղծ մըն է նաեւ, կրնայ տեսնուիլ որ էն չքնաղ յըղա- ցումներէն ոմանք, որոնք արտայայտուած են ճարտարապետական դիմակին ներքեւ, ընթերցան մէջ բանաստեղծական գեղեցկա- գոյն արադրութիւնները եղած են :

Կորնթական անդուգակից մայրաքաղաքին գաղափարը, օրինակի համար, առաջին ան- ցամ յղացուեցաւ անակնկալ պարագայի մը բերումով : Կորնթացի աղջիկ մը մեռնելով, մայրը կամ հիւանդապահը, հաւաքելով կո- ղովի մը մէջ անոր բոլոր ունեցած խաղա- լիկները, զորս այնքան կը սիրէր կենդանու- թեանը ժամանակ, կը տանի եւ գերեզմանին վրայ՝ կը դնէ՝ կղմինարով մը ծածկելով : Այն- պէս կը պատահի որ հողակոյտի մը վրայ կը գրուի, որ մէջտեղէն ճնշուելով ու ճնշուելով բարակ ցօղուններ ու ծիւեր կ'արձակէ, որոնք կողովին երկու կողմերէն կ'աճին ու կը մեծ- նան, ու կղմինարին հասնելով կրկին վար կը ճնշուին : Այս պահուս Քալիմաքոս, Կորն- թացի ճարտարապետը, պատահմամբ գերեզ- մանին քովէն անցնելով կը հրապուրուի սա-

ղարթներուն շնորհալի երեւոյթէն եւ մայրա- քաղաքի շինութեան ժամանակ կը գործածէ այդ ձեւերը, որոնք յետոյ կոչուեցան կո- րնթական :

Կթական ճարտարապետական եղանակն ալ, որ շատերու կողմէ անվթար պահուե- ցաւ, իր ծագումը առած է ծառուղիի մը մէջ աճող յարմար ծառի մը ամենապարզ վի- ճակէն ու գեղեցկութենէն :

Այս ամէնը սոսկ դիպուածներու արդիւնք են հաւանաբար : Սակայն ո՞վ, բայց ի անկէ որ բանաստեղծական գեղեցիկ տեսութիւն- ներով օժտուած է, կրնար զգալ բազմիւն նշանակութիւնը, կամ դարձնել այսպիսի փայլուն, հրապուրիչ եւ գործնական ձեւի մը : Ճշմարիտ ճարտարապետութեամբ է որ, բանաստեղծի ամբողջ հոգեով ու խանդով ամենաստոր ու չնչին առարկաներն իսկ յար- մար նպատակներու կը յատկացուին, ինչպէս Բլաքթին իր Երկու Շախիդներուն մէջ չքեղո- րէն կը բացատրէ . — «Ինչպէս որ ոչինչ կայ կեանքի մէջ, կըսէ ճարտարապետներուն ուղղելով խօսքը, այնպէս ալ ոչինչ կայ ան- կենդանութեան մէջ որ իր զասը չունենայ ձեւի համար, եւ երբ բոլորովին ձանձրնալք փետուրի մը զօրութիւնը ու տերուի մը քնքշութիւնը դիտելէ, կրնաք պոյտ մը ընել գետեղերքը կամ չուկայի ժխորին մէջ, եւ չկայ երկաթի կտոր մը որ մաքուր առարկայի մը չփոխուի, ու հին փսիածի կտոր մը ու տարադնած կողով մը որ մեծ դրամա- գլուխներու չառաջնորդէ : Այո՛, եւ եթէ մին- չեւ իսկ հաւաքէք աւաղը ու կտրտէք քարը՝ որուն վրայ անընդհատ կը կոխկոտէք, փըշ- րանքներու է՛ն աներեւոյթացեալ կեղեւնե- րուն մէջ անգամ պիտի զսնէք ձեւեր, որոնք իրենց տեղը ունին : »

Թարգմ. Անդ. Մ. Բ. Փ.

ՀԻՆ ՕՐԵՐ

Ե Ի

ԱՅՐ ՕՐԵՐՈՒՆ ՀԱՅ ՄԵԾԱՏՈՒՆՆԵՐԸ

1550 - 1870

ԳՐԵՑ Յ. Գ. Մ.

Կը ծախուի ընդ որ Հայ գրավաճառներուն քով եւ Բերա Վայօրն խանութը :

Ծ Ե Ր Ե Ր Ը

Երբ դուն ալեւոր՝ ու ես ըլլամ ծեր ,
 Երբոր ճերմըմնան իմ սակի մաղեր՝
 Պիտի՛րջները պարտէզ քեզ հետ միասին ,
 Վայելէլ տաքուկ արեւն մայիսին .
 Հոն՝ մեր սրտերն ու մարմին դողգոջուն ,
 Պիտի զուարթանան , ջեռնուն օրն ողջոյն .
 Եւ ես գեռատի սիրահւոյ մը պէս ,
 Գոհ և չնորհունակ պիտի ժպտամ քեզ .
 Պիտի խօսակցինք մենք զոյգ մ'ամուսնեք
 Թրվաստանին տակ միմիանց առնթեր .
 Ու զիրար գիտենք՝ անկուշտ , անյարիր ,
 Խորունկ նայուածքով քաղցրիկ , յուսալիր . . .
 Երբ դուն ալեւոր՝ ու ես ըլլամ ծեր ,
 Երբոր ճերմըմնան իմ սակի մաղեր :

Կանանչ , մամուապատ մեր հին օրերու
 Նրստաքարին վրայ երբ գանք խօսելու ,
 Պիտի ճաշակներ հաճոյքն անուշիկ .
 Համբայրը պիտի գընէ կէտ մ'յուշիկ . . .
 — « Ես քեզ կը սիրեմ » — ըսած չեմ ընդ միշտ ,
 Նոյն կրկնելով շարունակ անվիշտ .
 Պիտի վերջիչներ գէպքերը կեանքի ,
 Նոյն իսկ յուշիկներ՝ չընչին , վանաքի .
 Ճիշդ այդ միջոյին արեւէն շտտիկ
 Վարդ շող մը իջնէ պիտի ըսպիտակ
 Հերայ փունջին մէջ . — համբայր խընկաւէտ —
 Հանգչելու համար անդորր հոն՝ յաւէտ . . .
 Կանանչ , մամուապատ մեր հին օրերու
 Նրստաքարին վրայ երբ գանք խօսելու :

Դուն ինձ օրէ օր գառնատ խընկելի .
 Այսօր՝ երէկէն , վաղն՝ ալ աւելի .
 Դէմքի խորշոմներ չառթեն պիտի հող ,
 Իմ սէրս թո՛ղ վանէ ցաւեր ու մարմը .
 Տես , յիշատակներ աւելնան տակաւ ,
 Անոնք իմըս են , քուկըդ ալ հարկաւ .

... Ու մեր երկուքին անուրջք սիրալի ,
Իրար խառնուին տարփով սրխալի .
... Սէրն այն ընկերի — սրբազան անուր —
Մեր շուրջ կը հիւսուի աւելի ամուր ...
Իրան, պիտի ըլլանք արկար ու շատ ծեր ,
Յայնժամ ուժգնագոյն սեղմեմք քու ձեռքեր՝
Քանզի օրէ օր դառնաս խընկելի ,
Այսօր՝ երէկէն , վաղն՝ ալ աւելի :

Եւ այն սէրը սուրբ , — վաղանցուկ երազ , —
Կուզեմ սրբախ խորն ունել անպակաս .
Նուազ կարեւորն , — ըլլայ թէ հընար , —
Մեր իսկ ապագայ վայելքին համար ,
Կը պահեմ սերտիւ , քուկըդ է բոլոր ,
Անոնք ամբեն թո՛ղ մեր վերջին օր ...
Վաղեմի սիրոյս անգին երաշխիք
— ձօխ գանձերու տէր — ըլլանք երջանիկ ...
Այսպէս վերջացող անցեալին հաճոյք՝
Մեր հին օրերու երազք անմուռակ
Պիտի մի առ մի կարգաւ նըկարուին ,
Մեր յիշողութեան ու մըտքի առջին ...
Ու այն սէրը սուրբ , — վաղանցուկ երազ , —
Պիտի պահեմ խորն սրբախ անպակաս :

Երբ դուն ալեւոր՝ ու ես ըլլամ ծեր ,
Երբոր ձերմընիան իմ ոտի մազեր ,
Պիտի՛ իջնենք պարտեղ քեզ հետ միասին ,
Վայելել տաքուկ արեւն մայիսին .
Հոն մեր սրտերն ու մարմին դադդոջուն ,
Պիտի զուարթանան , ջեռնուն օրն ողջոյն .
Երբոր մեր սրտեր հրճուին վերստին ,
Մօտ պիտի կարծենք կեանքի դարունին .
Յայնժամ դեռատի սիրուհոյ մը պէս ,
Դո՛հ և չնորհունակ պիտի ժըպտիմք քեզ .
Դուն ինձ կը խօսիս սիրոյ վըրայով ,
Թըխտատանին տակ նըստած քովէ քով .
Զիրար կը դիտենք՝ անկուշա , անյարիւր ,
Խորունկ նայուածքով՝ քաղցրիկ յուսալիւր ...
Երբ դուն ալեւոր՝ ու ես ըլլամ ծեր ,
Երբոր ձերմընիան իմ ոտի մազեր :

ԿՆՈՋ ԲԱԺԻՆԸ

Կինը՝ ո՛չ թէ լաւագոյն եւ գեղեցիկ կէսն է մարդկութեան, ինչպէս կը յորջորջուի — ուրովհետեւ այրերը կ'իներէն շա՛տ աւելի լաւագոյն են ու գեղեցիկ, — այլ հասարակ կէսը եւ Կեղծիքին ալ ամբողջութիւնը։ Եւ այս տուած է իրենց այնպիսի դիրք մը, էրիկմարդուն բընական եւ ընկերական պատմութեան մէջ որ, այսօր — ինչպէս սիկզբները — զիրենք կը գերակայէ էրիկմարդուն։

Հոս չպիտի յայտնեմ կնոջ դէմ, իմ քիչ մը վիպային պարագաներէ սաղմուտած խորշանքս. ատի՛ յետադիմական պիտի նկատուէր եւ ծայրայեղ ալ սա յայտնութիւնը թէ կենդանական աշխարհին ամենատար Լուծեմէն մինչեւ մարդկային, քարոզուած, կատարելութեան մէջ, Կեանքի կոիւր՝ Կնկան կոիւ մը եղած է պարզապէս եւ ո՛չ ուրիշ բան, ինչպէս ըսուած է կարծեմ։ Եւ ո՛չ ալ պարզել այն ամէն վիտաները կամ օգուտները, հաճոյքներն ու վիշտերը, իբր երջանկատու կամ աղետաբեր՝ որոնց մայրը եղած է իր գոյութեան բոլոր շրջանին ու ապրած բոլոր միջավայրերուն մէջ ալ առհասարակ։

Ատի՛ ա՛մենքնիս ալ իրարմէ աղէկ գիտենք։

* * *

Ամէսէ Վինեռայի Բոչո՛ր Կիներըն (Toutes les femmes) Բ. հատորին — որ կը խօսի Արեւելքի ու Ափրիկէի կիներուն վրայ — ընթերցումը ինծի չեղաւ պիտի տայ դարձեալ խնդիր մը որ արդէն նկատուած է կարգ մը գրողներու կողմէ՝ ասկէ բաւական մը տարիներ առաջ։ Եւ երբ, այդ օրունէ մինչեւ հիմայ, քաղ մը կընեմ մեր լրագրական գրականութեան էջերուն վրայէն, ոչինչի կը հանդիպիմ գրեթէ որ արժէք մը տուած ըլլար Գաւառացի գրողներուն Պոլսեցիին բաղդատումով. անոնք որ այնքան կոյս եւ անկերպարան գոյացութիւններ ունին ձեռքերնուն տակ՝ կազմաւորելու, պճնազարդելու իրենց ուզածին պէս, միջավայրին ճաշակին

համեմատ, այնպէս որ՝ մենք այսօր, Պոլսեցի նորագոյն գրողներս որ անձեռնմուխ նիւթերու ծարաւէն կ'աղընձինք, իրաւունք չ'պիտի ունենանք արդեօք, չեմ գիտեր, հարցնելու այդ գրականութեան պաշտպաններուն թէ ի՞նչ ըրաւ իրենց փառաբանած գաւառական գրականութիւնը որ չէր հաւելէ Պոլսականին, ան որ հաճոյքով պիտի լսուէ վերջապէս, եւ որուն համար այնքան ուղղութիւններ եւ աշխատութեան ծրագիրներ պատրաստուեցան։

Գրական ծանօթ հարցին մէջ չմոլորելու համար — քանի որ մեր չուկէաբ ատի չէ — չեմ ծանրանար այդ խնդիրին վրայ. միեւնի սա զգացնել կ'ուզեմ թէ, հակառակ այնքան ուղեցուցումներու, այսօր ոչ թէ արեւատարիտական գրականութիւն մը չունինք գաւառական, այլ ո՛չ իսկ ցեղագրական նիւթերու առատ բերք մը, որ շատ դիւրաւ պիտի կրնար արտագրուի՝ եթէ երեւք այդ գրողները փոխանակ Առաջնորդական — Տիրացուական խնդիրներով դանկ ճաթեցնելու եւ կոկորդ պատուելու, կամ շա՛տ շա՛տ «կոյս» եւ «լուսին» գոհհիկցած քերթուածներ տողել ջանալու, քիչ մը ուշադրութիւնով եւ գրիչի վարժութիւնով ուղէին հայ կնոջ բնորոշ հանուր կամ մասնական մէկ ուսումնասիրութեան կարկառուն անողծները հայթայթել Մենք իրենցմէ չպիտի պահանջէինք հայ Լըմօնիէին՝ Ռուբէն Զարգարեանի հիանալի արուեստը կամ Թլկասինցիի մը բարանկար իւրօրը, ատի միտքի առանձնայատուկ սլացք մըն է որ դիւրաւ չստացուիր եւ քիչ մըն ալ խառնուածքի խնդիր, այլ շինական կեանքի պարզ հայեւացումներ, հէքեաթներու, գեղօններու կմախքներ որոնք շատ լաւ պիտի ծառայէին Պոլսեցիին ալ, դանոնք վեցկահիւսելով իրենց երեւակայութեան եւ բանահիւսական կարողութիւնով՝ նեւթ գրականութեան բովելին մէջ։

* * *

Յեղային ուսումնասիրութեան մը առաջին գլուխը կ'ինն է, որովհետեւ անիկայ իբր մայր, իբր ամուսին, ընտանեկանութեան հիմքը կը կազմէ, եւ, իր կղզիացած

վիճակին մէջ, նուազ ատակ ըլլալով այն զանազան միտքերու թիւններուն — ինչպէս տղամարդը իր թափառիկ կեանքին մէջ — որոնցմէ պիտի այլապէսը ցեղին նախնական նկարագիրը, կրնը, ինքն իր մէջ կը պահէ նախնիքին հոգեբանական եւ կազմարանական առանձնայատկութիւնները եւ չուզեր զարտուղիլ այն ամէն նախապաշարունակէն՝ որոնց մէջ ատատանած է իր օրրանը :

Հակառակ այսքան կարեւոր ու էական պէտքի մը, որուն պատրաստութիւնը շատ կնոռտ խնդիր մը չէ՝ կարծեմ, այսօր սակայն չունինք Հայ կնոջ, գէթ քանի մը դաւառներուն հայ կնոջ, մէկ ուսումնասիրութիւնը, եւ ամբողջ սա՛ մեր լրագրական թոհոսին մէջ, հազիւ մէկ կամ երկու ուսումնասիրութիւն կը յիշեմ, որոնցմէ մէկն է գաւառացի ընկերարան — գրողէտին՝ Գ. Անդրէասեանին՝ Մշեցի կիներ, զոր իւր նմոյշ հըրատարակած է կարճ ծրագիրով մը՝ ուրիշներու աշխատութեան զիւրութիւնին համար : Թէեւ անկէ ի վեր շեշտ մը իսկ ըսուած չըլլայ (*) :

* * *

Բոլոր Կիներըն Հայերուն նուիրուած մտքը՝ — երեք էջ տեղեկութիւն եւ երկու Հայոհիկ պատկեր միայն — իր հակիրճութեանը մէջ շատ զեղեցիկ եւ ճշմարտայայտ էր, որ սակայն հարեւանցի հետաքրքրուողի մը անգամ չպիտի բաւէր իր փնտռածը տեսնելու : Զգելով օտարները, մենք այսօր հայ ըլլալով, չենք ճանչցած մեր կիները, իրենց հոգեբանական — մտաւորական կարողութիւններուն մէջ, որովհետեւ թէեւ գրեթէ բոլոր գաւառի կիները ընդհանուր գիծերու մէջ իրարու քիչ շատ նման՝ բայց երկրորդական եւ մանրամասն պարագաներով զլիտովին կը տարբերուին իրարմէ :

Հայ կնոջ ուսումնասիրութիւնը շատ զիւրին չէ՝ ո եւ է՝ մէկու մը համար որ կը մտադրէ զայն : Եւ գրեթէ անկարելի՛ երբ ինքնազուրկ աշխատութեան մը մէջ նետուի : Եթէ ամէն գաւառէ գէթ մէկ գրող միայն գտնուի որ

յանձն առնէ իր միջավայրի կնոջ բարքի եւ բնոյթի ուսումնասիրութիւնը ընել, անշուշտ շատ զիւրացած պիտի ըլլայ այլեւս ընդհանուր ուսումնասիրութեան մը գործը :

Ծրագիրի մը համաձայն որու վրայ հիմնուած — ինչպէս աշակերտ մը պիտի պատասխանէր հրահանգի մը հարցումներուն — ո եւ է գրող, կարող պիտի ըլլար ընդգծել համայնքի մը կնոջը նկարագիրը, որ իր անշատութիւնովը պիտի գար մէկ շառաւիղը կազմել ամբողջական գործին :

Այդ ծրագիրը, մտածմբ պատրաստած ըլլալով Գալուստ Անդրէասեան, ինչպէս ըսինք, Բիւրակնի 1897-98 թ. սկիզբի թիւերուն մէջ, կարելի էր հոն գիմել, սակայն անոնցմէ դուրս արդէն ես ալ քանի մը նիշեր հաւաքած ըլլալով՝ ամէնքը մէկանց, ընդարձակօրէն ուրիշ առիթով մը, մտադիր եմ Մալխի մէջ հրատարակութեան տալ՝ հայ-կնոջ ուսումնասիրութեան անհրաժեշտ տարրերը շեշտող այդ հարցարանը, որու վրայէն յուսով եմ թէ գաւառացի գրողներ լուս չպիտի անցնին :

ՅԱԿՈԲ ՏԷՐ—ՅԱԿՈԲԵԱՆ

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Ս. Պատրիարք Հայրը որ կիրակի օրու ընէ ի վեր իր բնակարանը կը մնար անձնական տկարութեան պատճառով, չորեքշաբթի Պատրիարքարան գնաց :

Մանկավարժական կիրակնօրեայ դասախօսութիւնները Զատիէն ետքի յետաճըգուած են :

Ռուսահայ ծանօթ բանասէր եւ հրապարակագիր Պ. Աղեքսանդր Երիցեանցի մահուան լուրը հազարեցին օրաթերթերը, Հանգուցեալը հնագիտական բաւական հետազոտութիւններ ունի, ի մէջ այլոց ուսումնասիրութիւն մը Ներսէս Աշտարակեցի Կաթողիկոսին վրայ : Աշխատակցած է հայ եւ ոգոս թերթերու : Ծոխ մատենադարան մը ունէր զոր Պ. Աղեքսանդր Մանթաշեանց գներ է 30,000 ռուպլիի : Եւ զարկաւորութիւնը հանգիստաւորապէս կատարուել է Թիֆլիզի մէջ :

(*) Ծ. Խ. — Ծաղիկ օրաները հրատարակեց վերջերս ուսումնասիրութիւն մը ուսանայ կնոջ վրայ :

Կարնոյ երկրաչարժէն արկածեալներուն ի նպատակ 100 ոսկի հանգանակելով՝ Ազգ. Պատրիարքարան զրկած են Ազգ. քսանդրիոյ ազգայինները :

Բերայի Թաղ. Խորհուրդի գանձապետ Թա. Կէս Էֆ. Էթմէքճեան կարեւոր գումար մը գոյացուցած ըլլալով՝ կարօտեալ եկեղեցիներու համար Բերայի եկեղեցիներուն մէջ իր պտտուցած պնակներով , Ս. Պատրիարք օրհնութեան Կոնգակ մը ուղղելու է յիշեալին :

Թերգեան Գերապայձառ , Ատանայի Հայ Հռոմէականներու առաջնորդը , իր Պատրիարքարանին հետագորական հրահանգին համաձայն մայրաքաղաքս եկած է :

Հայ Հռոմէականաց Ս. Պատրիարքը հրա- ժարեցուցեր է Հռոմայ Աթոռին մօտ իր նուիրակը՝ Գոյունեան Գերապայձառ՝ որ ի նպատակ Վատիկանի գործած էր , Հայ Հռոմէականաց Պոսոյ Պատրիարքարանին երեւմտեքին վրայ քոնդրոլ հաստատելու խնդրին մէջ :

Տառեան հանգուցեալ Յարութիւն փաշայի մատենադարանը աճուրդով ծախուեցաւ 5250 զրշի : Այդ մատենադարանին մէջ մասնաւորաբար կը գտնուէին 450 հատոր ֆրանսերէն վէպեր եւ 150ի չափ զիւանդակտական գիրքեր :

Նպաստից Յանձնաժողովը՝ այս երեքշաբթի օր գումարուեցաւ Պատրիարքարանի մէջ , Ներկայ էին Տ. Վահրամ Կոպիկ. Մանկունի , Միհրան Էֆ. Սէթեան , Բարթող Էֆ. Թէլեան եւ Միհրան Էֆ. Աբիկեան : Ս. Պատրիարքը անձնական տկարութեան պատճառաւ ներկայ չըլլալով , Յանձնաժողովը պատշաճ չհամարեց գործերը անօրինել , այլ միայն խորհրդակցութիւն մը կատարեց քանի մը խնդիրներու վրայ : Ուշադրութեան արժանուցաւ նախ յանձնաժողովին պաշտօնին շարունակութեան խնդիրը , եւ այս մասին կարծիքներու փոխանակութիւն մը կատարուելէ ետքը , Յանձնաժողովը նկատելով որ ինք Խառն Ժողովոյ ընտրանք կոչուած էր ի պաշտօն որոնց եւ կարօտելոց անմիջական պէտքերուն զոհացում տալու համար Ս. Պատրիարքին գործակցելու , եւ կատարած էր իր վրայ զբո- ուած տարապահութիւնը , ստանձնելով ի վերջոյ նաեւ գիւղական զարոյցներու կազմա-

կերպութեան հոգն ալ , զոր Ազգ. Վարչութիւնը նոյնպէս զրած էր դարձեալ իր վրայ նկատելով որ իր պաշտօնը տեւական հանգումէք մը չէր կրնար ունենալ , եւ որքանոց ներու տեւողութեան չըջանին լրման պատճառաւ , դաւառացի աղքատ աղոց խնամքի ու հոգածութեան համար ինչ ինչ հիմնական կարգադրութիւններ ծրագրուած էին , եւ սոնց գործադրութիւնը չէր կրնար այլեւս վերաբերիլ իրեն , լրացած համարեց իր պատշոնը , եւ որոշեց բացակայ անդամոց հաճութիւնն եւս ստանալէ ետքը , իր հրաժարականը մատուցանել Ազգ. Կեդր. Վարչութեան , հաւաքական դրով մը :

Քալ. Ժողովի Երկու անդամներ , Վսեմ Գարրիէլ Էֆ. Նորատունկեան եւ Վսեմ. Էթմէք Էֆ. Չայեան հիւանդ են չարաթէ մը վեր : Նորատունկեան Էֆ. , որ կը դարմանուի Տօքթ. Խնդիրեան Էֆ.ի կողմէ , սաստիկ տենդ ունի եւ անհանգիստ գիշերներ կ'անցունէ : Չայեան Էֆ. , զոր կը դարմանէ Տօքթ. Խորասանճեան Էֆ. , թէեւ մտահոգութիւն պատճառով վիճակ մը ունէր առջի օրերը բայց զգալի բարւոքում մը ցոյց կուտայ : Շուտաւիոյթ ապաքինում կը մտաւ ինք :

ԳՐԱԿԱՆ ՆՈՒԻՐԱՏՈՒՌՈՒԹԻՒՆ

Սերովքե Էֆ. Պոյաճեան մեկ տարեկան Մալի նուիրեց Կեսարիոյ Կերմիր գիւղի ազգ. վարժարանին :

«ՄԱՍԻՍ»Ի ՅԱԶՈՐԴ ԹԻԻՈՎ

ԸՆԴԱՐԱՐՈՒՄ ԵՎ ՆՈՐԱՎԷՊ ՄԷ

“ԳԼԱՆԻԿ”Է

ՏՈՔԹ. ԳՐԻԳՈՐ ՃԵԼԱԼ , նախկին եփեռն եւ եկեղեռն Բարիգի հիւանդանոցներու եւ շքադրամով պատուուած Assistance Publiqueի կողմէ , 14 տարի Բարիգ անցունելէ ետքը , որուն 6 տարին իրեւ բժշկ , մարաքաղաքս հաստատուած է : ՏՈՔԹ. Գ. ՃԵԼԱԼ կը դարձանէ , բացի ընդհանուր հիւանդութիւններէ , մասնաւորապէս ջղային եւ մոլորաշարժի հիւանդութիւններ , Ամէն օր , բարեքարթի զատ , կէս օրէ վերջ հիւանդ կընդունի իր տունը՝ Բերա , Սաղըզ Աղաճ. Թ. 38 :

12-30

Արտօնատէր Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

Տպագրութիւն Ե. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

Կ. Պոլիս , Ֆրանսիոյ Եօզուշու , Թիւ 27


Խիստ խնամով ու տարապայման աժան գիներով չափու վրայ կը պատրաստուին մէն տեսակ շապիկ, օձիք, թեւնոց, գիշերազգեստ ու ներքին ճերմակեղէններ:

Միայն Ֆրանսական ու Անգլիական ընտիր տեսակ կերպաներու զանազանութեամբ օժտուած սոյն գործարանը տրամադիր է ընդունիլ ու հատարեալ հոգածութեամբ պատրաստել հարսանեաց ճերմակեղէններու յանձնարարութիւններ:

Կր ծախուին վերջին նորաձեւութեամբ խիստ ճաշակաւոր ու միշտ աժան գիներով օձիք, թեւնոց, ֆլանէլ, գուլպայ, թաշկինակ, ոսկեզօծ կոճակներ, փողկապ, դրամապնակ, զմեյի «Չէֆրա», խոզանակ, սանտր ու անուշահոտութեանց լաւագոյն տեսակներ:

Մ. ՏԵՐ-ԴԱԻԻԹԵԱՆ վաճառատունը նորաձեւութեան, ապրանայ ազնուութեան, յանձնարարութեան խնամով պատրաստութեան, ու գիներու աժանութեան տեսակէտով վտանգի ու լաւ յանձնարարելի լաւագոյն տուններէն մէկն է:

ԳԻՆԵՐԸ ՈՐՈՇԵԱԼ ԵՆ



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի ազդիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

ՍԻՆԿԷՐ

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ՝

ԲԵՐԱ, Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիւէին դիմաց:

ԿԱԼԱԹԱ { 1. Սինկեր խան, Թինէլին ետեւը.
2. Գարաքէօյ, Թրամիլէյին կայարանին Դիմաց:

ՊՈԼԻՍ { 1. Սուլթան Համամ.
2. Սուլթան Պէյազիտ:

Դասերը եւ նորոգութիւնք ձրի:

Կասարեալ երաւեստորութիւն

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ

ՇԱՐԼԱԹԱԿԱՆ
ՄԱՍՆԱԴԻՂԵՐ

ԳՈՂԱՐԵՂԻՆԱՅ ԵՒ ԱՐԾԱԹԵՂԻՆԱՅ
ՎԱՃԱՌԱՏՈՒՆ՝ Ալիսան Մ. Պարսիզպան-
եան Ոսկերչական Վաճառատունը (Պոլիս,
Ոսկերչաց Շուկայ, թիւ 13) որ երկար առ-
ջոյններէ ի վեր կը գործէ ճշգրտութեամբ եւ յա-
ջողութեամբ, եւ որուն գործածած ոսկին ու
աղամանդները առաջին տեսակէ ըլլալէ զատ,
արհեստագիտական պատրաստութիւնն ալ
խիստ ճաշակաւոր է, եւ այս տեսակէտներով
միշտ գոհ թողուցած է իր բազմաթիւ յաճա-
խորդները, այս անգամ բոլորովին նոր գրու-
թիւն մը հնարած է, — յոյժ զիւրամաաչելի
գիններով իր ծախած ապրանքները, ի հար-
կին, 100ին 10 զեղչով ետ առնել յաճախոր-
դէն եւ զրամը վճարել: Կ'արժէ այցելել յիշ-
եալ Վաճառատունը, եւ աչքէ անցընել անոր
ոսկերչական ցուցադրութիւնները, այս կարգի
որ եւ է գնում ընելէ առաջ:

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

ՏՈՔԹ, Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԲԵՐԱ, ՄԵԾ ՓՈՂՈՅ, ԹԻԻ 200

Կալաթա-Սերայի Լիսին դէմ

ԴԵ. ՆԵ. ՇԲ. օրերը առաւօտեան կանու-
խէն մինչեւ իրիկուան ժ. 11 1/2

ԲԵ. ԴԵ. Ուր. օրերը 6 եւն մինչեւ 11 1/2

Կիրակի օրերը ժամադրութեամբ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԳԱՂՏՆՈՒԹՆԵՐ (Հետաքրքրա-
վեալ երեք հատորով) Թարգմ. Կ. Ս. Իիթիէն
Վաճառման կեդրոնատեղին է Պաղատան Գրատունը
կը գտնուի նաեւ ամէն հայ գրավաճառներու քով:
Գին 15 դրուշ:

4-10

ԻԻՆԻՕՆ

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՅ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1828-1829

ՀՐԴԵՀԻ ՃԻԻԴ

Մինչեւ 1899ի վերջը հատուցեալ փեսք	240,000,000 ֆր.
1899ին գանձուած ապահովագին	19,500,000 »
Գրամազուլիս եւ պահեստ	105,000,000 »
Ապահովագրեալ գրամազուլիս	18,000,000,000 »

ԿԵՆԱՅ ՃԻԻԴ

Մինչեւ 1889ի վերջը հատուցեալ փեսք	99,000,000 ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	253,000,000 »
Գրամազուլիս եւ պահեստք	150,000,000 »

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ
«Իւնիօն»ի ապահովագրելոց կ'ընծայէ հսկայ երաւխաւորութիւն մը **ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ**
ԿԱՐՆԼԻ ԶԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼԻԹԻ ՄԷՋ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐԵԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ԲՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց գեղչեալ գիներով: Նպաստաւոր պայ-
մաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ օր եւ է ընկերութեան
պայմանները: Շահարաթիւններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիօնի
ապահովագրուողք **ԶԵՐՄ** են այն վնասներէն եւ յուսախաբուրիւններէն, որոնց կ'են-
թարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բարդման (accumulation des
bénéfices) **ՅՈՒԹԻ** եւ **ՎՆԱՍԱԿԱՐ** դուրսեամբ գործող ընկերութեանց կ'ապահովա-
գրուին:

Ընկերութեան գրամատունն է **ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՑՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԳԱՆ**
Թուրքիոյ եւ Արեւելքի Տնօրէնութիւնը

Կ. Պոլիս, Կալաթա, Թահապուրուն խան, Օսմ. Պանֆային դիմացը
Գործակալութիւնք Թուրքիո գլխաւոր քաղաքաց մէջ